

ՎՈՒՏԵՐԻ «ԿԵՍԱՐԻ ՄԱՆԸ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԻՉԸ

Կ. Հ. ՃԻՆԳՈՋՅԱՆ

Վերջերս, ֆրանսիացի մեծ լուսավորիչ Վոլտերի մահվան 200-ամյակի կապակցությամբ անհրաժեշտ եղավ անդրադառնալ նրա գեղարվեստական և գիտական հայկական արձագանքներին: Մեզ առանձնապես հետաքրքրում էր Վոլտերի «Կեսարի մահը» ողբերգության առաջին հայ թարգմանչի խնդիրը: Ո՞վ է նա, ե՞րբ է թարգմանել այդ երկը, ե՞րբ է այն լույս տեսել, ո՞վ է հրատարակիչը և այլն:

Հայտնի է, որ ֆրանսիացի մեծ գրողը հայ իրականություն մուտք է գործել իր նշանավոր «Կեսարի մահը» ողբերգությամբ: Անցյալի և մեր ժամանակների մատենագիտության ու բանասիրության մեջ այս երկի լույս ընծայման թվագրության ու հրատարակության մասին արտահայտվեցին տարբեր կարծիքներ: Գ. Զարբհանալյանը, իսկ այնուհետև Թեոդիկը, Գ. Լևոնյանը¹ առաջ քաշեցին այն տեսակետը, թե Վոլտերի «Կեսարի մահը» ողբերգության հայերեն տարգմանիկ թարգմանությունը լույս է տեսել Մադրասում՝ 1818-ին, Սարգիս Ծատուր Աղավալյանցի հրատարակությամբ: Երկը անգլերենից գրաբար թարգմանել է Հակոբ Նազար Շամբյանը: Այս կարծիքը իր «կայուն» տեղը գտավ նաև մեր օրերի բանասիրության և մատենագիտական գրականության մեջ²:

1952 թ., Կալկաթայում լույս տեսնող «Նոր Ազդարար» եռամսյա պարբերականում տպագրվեց իրանահայ բանասեր Ա. Երեմյանի «Ջուղահայ-հնդկահայ մշակույթը և ժողովրդական բանահյուսությունը (XVII—XIX դար)» հոդվածը: Այստեղ Մադրասի հայկական տպարանների մասին տրված մատենագիտական տեղեկությունների մեջ հաղորդվում է, որ Վոլտերի «Ի վերայ մահուան Յուլիոս Կեսարու» ողբերգությունը լույս է տեսել 1812-ին՝ Մադրասում, Հակոբ և Հովսեփ Շահամիրյան եղբայրների տպարանում: Երեմյանի այս տվյալը նույնպես մտավ շրջանառության մեջ³:

Այս երկու տարբեր կարծիքները, տասնամյակներ շարունակ հաշտ ու խաղաղ համատեղվեցին մեր մատենագիտության մեջ: Վերջապես 1971-ին մատենագետ Հ. Դավթյանի ջանքերով ձեռք բերվեց խնդրո առարկա հրատարակության լուսանկար-պատճենը: «Գրական թերթում» տպագրված իր հաղորդման մեջ Դավթյանը նույնությամբ վկայաբերում է Վոլտերի հայախոս երկի

1 Գ. Զարբհանալյան, Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883, էջ 529: Թեոդիկ, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912, էջ 177: Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946, էջ 235:

2 Տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», հատ. Ա, Երևան, 1962, էջ 36—37, 535: Հ. Դավթյան, Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Երևան, 1967, էջ 86:

3 Նոր Ազդարար, Կալկաթա, 1952, № 6—8, էջ 13:

4 Տե՛ս Վ. Թերզիբաշյան, Շեքսպիրը հայերեն, Երևան, 1956, էջ 22: Նույնի՝ Հայ դրամատուրգիայի պատմություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ 192:

8 Հանդիս, № 2

տիտղոսաթերթի բովանդակությունը⁵։ Ստորև ներկայացնում ենք այդ տիտղոսաթերթի ֆոտոպատճենը, որը մեզ տրամադրել է Հ. Դավթյանը։

Ինչպես նկատելի է, Ա. Երեմյանի տեղեկությունները բաղված էին բուն սկզբնաղբյուրից։ Թվում էր, թե Հ. Դավթյանի հաղորդումից և նրա հետևություններից Մ. Շտիկյանի՝ «Հայ նոր գրականության ժամանակագրությունը» (Երեվան, 1973) մատենագիտական աշխատության մեջ կատարած որոշ շտկումներից հետո պիտի որ հարցը համարվեր լուծված։ Սակայն «Լրաբերի» վերջին համարներից մեկում՝ հնդկահայ լուսավորիչ Հ. Շմավոնյանի հասարակական գործունեությունը նվիրված հոդվածի հեղինակը, շրջանցելով այս ամենը, դարձյալ դիմում է արդեն հերքված աղբյուրներին⁶։ Հուսով ենք, որ այս ակամա վրիպումը շուրջ մեկ դար ավանդաբար գոյատևող թյուրիմացության վերջին ակորդն է։

Վոլտերի հայախոս երկի թվագրության և հրատարակության խնդիրը պարզելուց հետո, այնուամենայնիվ չլուծված մնաց մի կարևոր հարց. ո՞վ էր «Կեսարի մահը»⁷ ողբերգության թարգմանիչ ու հրատարակիչ Հակոբ Նազար Շամրյանը⁸, ազգակցական, արենակցական ի՞նչ կապ ուներ Շահամիրյանների նշանավոր տոհմի հետ։

Անցյալի հայ մատենագետներն ու բանասերները ինչ-ինչ վերապահումներով չեն անդրադարձել այս հարցին, հավանորեն բավական համարելով, որ իրենց հաղորդած տեղեկություններում Հակոբ Նազար Շամրյանը հիշատակվում է որպես «Կեսարի մահը» ողբերգության թարգմանիչ կամ հրատարակիչ։

«Հայ նոր գրականության պատմության» առաջին հատորում «Ներածության» հեղինակ, բազմավաստակ գրականագետ Ա. Ինժիկյանը, անդրադառնալով հայ նոր գրականության սկզբնավորման ու ձևավորման պատմագրական նախադրյալներին, առանձին տեղ է հատկացնում հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հնդկահայ գործիչների դրական-գաղափարական գործունեությանը. «Նշանակալի է այն փաստը, — գրում է հանգուցյալ գրականագետը, — որ Վոլտերի «Հուլիոս Կեսարի մահը» ողբերգությունը, որի պաթոսը բռնակալության դեմ պայքարի, ազատության գաղափարն է. հայերեն թարգմանությամբ լույս է տեսնում 1818 թվականին Մադրասում, հենց այն միջավայրում, ուր ձևավորվել էր հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը, բնորոշ է նաև, որ Վոլտերի երկի հայ թարգմանիչը այդ գաղափարախոսության կրողներից մեկի՝ Շահամիր Շահամիր-

5 Հ. Դավթյան, Վոլտերի «Հուլիոս Կեսարի մահը» և Շեքսպիրի մուտքը մեզանում, «Գրական թերթ», 1971, № 4։

6 Մ. Մխիթարյան, Նյութեր Հարություն Շմավոնյանի գործունեության մասին, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1978, № 7, էջ 96։

7 Բանասիրության մեջ առհասարակ ընդունված է համանուն ողբերգության «La mort de César», «Смерть Цезаря», «Կեսարի մահը» անվանումը։ Ներկա թարգմանության երկրորդ տիտղոսաթերթը, ինչպես նաև նույն ողբերգության հետագա հայերեն թարգմանությունները (Պեղիկեայան, Մխիթարյաններ) նույնպես կրում են «Մահ Կեսարու» խորագիրը։

8 Ազգային-ազատագրական շարժման հնդկահայ գործիչ Շահամիր Շահամիրյանը և նրա հետևորդները հաճախ հանդես են եկել իրենց հայտնի ազգանվան տարբեր տառադարձություններով, ինչպես՝ Շահամիրյան, Շամիրամյան, Շահմիրյան, Շամիրյան, Շամրյան և այլն։

յանի որդին է՝ Հակոբ Շահամիրյանը»⁹։ Եվ տեղնուտեղը վկայակոչում է Գ. Զարբհանայանի աղբյուրը, ուր որպես թարգմանիչ հանդես է գալիս Հակոբ Նաղար Շամրյանի անունը։

Նույն հատորի «Ժամանակագրությունը» և «Անվանացանկը» կաղմող բանասեր Ս. Շտիկյանը պաշտպանում է այդ տեսակետը, և ինքը ևս Հակոբ Նաղար Շամրյանին նույնացնում Շ. Շահամիրյանի ավագ որդու՝ Հակոբ Շա-

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ԼԵՂԵՂԵՂ

ՅՈՒՂԻՈՍ ԱՆՍԼԱՐՈՒՄ

ԱՂԵՂԵՂ ԵՂԵՂԵՂ Ա ԼԵՂԵՂ ԳԵՂԵՂԵՂ

Ի մեզս վերածեալ հայկական բարբառ ,
 Ի վերն Յակորայ Նաղար Շամրյան ,
 Ենթադրեալ բնագրէ , ի պատմեալ ըն-
 թերգութեալ պատանեկացս մերազնեից :

Ի հայր-ղեղ-ԼԵՂԵՂ ՏԵՂԵՂԵՂ ԱԼԵՂԵՂ ԱՅ՝
 ԼԵՂԵՂԵՂ ԵՂԵՂԵՂ

ԻՄԱԴՐԸՍ

Ի ՏԵՂԵՂԵՂԵՂԵՂԵՂԵՂ ԼԵՂԵՂԵՂԵՂ ՊԵՂԵՂ ՅՅ՝
 ԼԵՂԵՂ ԵՂԵՂԵՂ ԵՂԵՂԵՂ ԼԵՂԵՂԵՂ

1818

Համիրյանի հետ։ Անվանացանկում նշված է. «Շամրյան¹⁰ Հակոբ Նաղար—տե՛ս Շահամիրյան Է.», այսինքն՝ Հակոբ, իսկ «Շահամիրյան Է.» անվան դիմաց նշանակված են 36, 37, 529, 534¹¹ էջերը, որտեղ խոսքը մեկ Շ. Շահամիրյանի որդու՝ Հակոբ Շահամիրյանի մասին է, մեկ՝ Հակոբ Նաղար Շամրյանի։

Հետագայում այս վարկածը առարկության չհանդիպեց և բանասիրության մեջ ձևուք բերեց հավաստի իրողության իրավունք։ Է. Դավթյանը «Գրական թերթում» սպաղորած հոդվածում իր առջև խնդիր էր դրել հիմնականում պարզելու Վոտերի երկի հայերեն առաջին թարգմանության թվագրության և հրատարակության հարցը, ինչպես նաև լուսաբանելու հայ իրականության մեջ Շեքսպիրի անդրանիկ ընկալումների հետ առնչվող հարակից մի խնդիր։

⁹ Տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», հատ. Ա, էջ 36—37։

¹⁰ Պետք է լինի Շամրյան։

¹¹ Պետք է լինի 535։

II. Շտիկյանը, չնայած իր մատենագիտական շտկումներին, «Հայ նոր գրականության ժամանակագրության» մեջ այլևս չանդրադարձավ Վոլտերի երկի թարգմանչի ինքնությանը, հավանաբար, շարունակելով մնալ իր նախկին տեսակետին՝ այսինքն Հակոբ Նազար Շամրյանի անվան տակ ձանաչելով Ս. Շահամիրյանի որդի Հակոբ Շահամիրյանին:

Արժանահավատ տվյալներով չհիմնավորված այս տեսակետը, սակայն, դուռ է բացում նոր թյուրիմացությունների: Նույնացնելով Շահամիրյանների այս երկու տարբեր շառավիղներին մեկ անձնավորության մեջ, փաստորեն ժխտվում էր Հակոբ Նազար Շամրյանի ինքնությունը և նրանից խլվում Վոլտերի երկի թարգմանիչն ու հրատարակիչը լինելու պատիվը:

Փորձենք վերականգնել պատմական ճշմարտությունը: Ս. Շահամիրյանի ավագ որդի Հակոբ Շահամիրյանի հասարակական և գրական-հրատարակչական գործունեությունը ուսումնասիրվել և ուսումնասիրվում է XVIII դարի երկրորդ կեսի ազգային-ազատագրական շարժման հեղկահայ գործիչներ Հ. էմինի, Մ. Բաղրամյանի, Շ. Շահամիրյանի, Գ. Խոջաջանյանի և նրանց համախոհների գործունեության հետ կապված, նրան համարելով այդ խմբակի գործուն անդամներից մեկը: Հոր նյութական աջակցությամբ և հովանավորությամբ, նա 1772-ին Մադրասում հիմնադրել է տպարան, ուր իր անմիջական աշխատակցությամբ հրատարակվել են լուսավորական, ազգային-ազատագրական գաղափարներով տոգորված անդրանիկ ծրագրային երկերը («Նոր տեսրակ որ կոչի Յորդորակ», Մադրաս, 1772, «Գիրք անուանեալ որդեպաշխ փառաց», Մադրաս, 1773 և այլն):

Հ. Շահամիրյանը ունեցել է կարճատև կյանք. ծնվել է 1745-ին, մահացել 1774-ին՝ ստեղծագործական ուժերի ծաղկուն շրջանում: Հարց է առաջանում. ինչպե՞ս կարող էր 1774-ին կյանքից հեռացած Հակոբ Շահամիրյանը հանդես գալ 1812-ին որպես «Կեսարի մահը» ողբերգության թարգմանիչ, առավել ևս որպես հրատարակիչ:

Նթե մի պահ թույլ տանք մտածելու, որ այդ երկը իրավամբ հայացրել է Շ. Շահամիրյանի որդին՝ Հակոբը, ապա պետք է ընդունենք նաև, որ այն թարգմանվել է Հակոբ Շահամիրյանի կենդանության օրոք, այսինքն՝ մինչև 1774 թ.: Նվ քանի որ այդ գիրքը լույս է տեսել 1812-ին, ծայրահեղ դեպքում այն պետք է համարել շուրջ քառասուն տարի հետո լույս տեսած հետմահու հրատարակություն: Իսկ նման դեպքում միանգամայն բացառված է թարգմանիչն ու հրատարակիչը նույն անձը լինելու հնարավորությունը, մանավանդ, որ Հակոբ Շահամիրյանը Հովսեփ անունով եղբայր չի ունեցել, իսկ Շահամիր Շահամիրյանի որդիները, հասկանալի պատճառով, չէին կարող և երբեք չեն կրել «Նազար» հայրանունը:

Վոլտերի «Կեսարի մահը» ողբերգության թարգմանությունը չէր կարող պատկանել XVIII դարի 70-ական թթ. սկզբներին գրական ասպարեզում հայտնված, վաղամեռիկ Հակոբ Շահամիրյանի գրչին նաև մեկ այլ տրամաբանությամբ: Բավական է համեմատական քննության ենթարկել Շահամիրյանների 1770-ական թթ. աշխատասիրած ու հրատարակած գրքերը 1812-ին տպագրված «Կեսարի մահը» ողբերգության հետ, որպեսզի մեկ անգամ ևս համոզվենք, որ Վոլտերի երկի հայերեն թարգմանությունն իր լեզվաոճական ֆակտուրայով, տպագրական կուլտուրայով և, վերջապես, առաջաբանում արժարժվող կլասիցիստական թատրոնի տեսությանն ու գի-

շագիտական սկզբունքներին վերաբերող խնդիրներով հայ իրականության համար արդեն իսկ նոր, առավել հասուն շրջանի այտուհայտություն է:

«Կենսարի մահը» ակներևորեն զերծ է Շահամիրյանների հրատարակություններին բնորոշ հրապարակախոսական շեշտից, շարահյուսական, ուղղագրական և տպագրական բազում թերություններից: Հիշյալ գրքի որևէ էջում չենք հանդիպում Շահամիրյանների հրատարակություններում տեղ գտած այնպիսի խոստովանությունների, ինչպիսիք են, օրինակ, Շ. Շահամիրյանի կամ նրա որդու՝ Հակոբի անկեղծ հանձնառությունները. «Որպես շարագրող գրքիս գործին վաճառական անծանօթ ի արուեստին շարագրութենէ և բոլորովին աղբատ հավաստի բռնից բայից և շարելոյ տառից ի սովորութենէ հայոց ոչ կարայ լոյս ածել յաւելի քան զայս»: Նման խոստովանություններով հանդես է եկել նաև Շ. Շահամիրյանի մյուս որդին՝ Եղիազարը՝ «Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց» գրքի հիշատակարանում, գրական-հրատարակչական գործի ասպարեզում իրեն համարելով զեռևս «տառից դերակիրթ աշակերտ»:

Շ. Շահամիրյանի որդին՝ Հակոբը ևս չէր կարող անշափ բարձրանալ իր միջավայրի գրագիտության և գրական-գեղագիտական ըմբռնումների այն մակարդակից, որը պայմանավորված էր XVIII դարի երկրորդ կեսի հնդկահայ գաղթօջախի սոցիալ-պատմական և հոգևոր-մշակութային նախադրյալներով:

Հակոբ Շահամիրյանի մահվանից հետո Շ. Շահամիրյանին աջակցում է նրա երկրորդ որդին՝ Եղիազարը, որը նույնպես աչքի է ընկնում հասարակական-քաղաքական և հրատարակչական գործունեությամբ: 1775 թ. վերջինիս «տպիւք և ծախիւք», հավանաբար նաև աշխատակցությամբ, Շահամիրյանների տպարանում լույս է տեսնում Մեսրոպ Երեցի (Սյունեցի) «Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց» աշխատությունը: Առաջաբանում Եղիազարը խոր կսկիծով ողբում է վաղամեռիկ եղբոր՝ Հակոբի մահը, խոսում նրա գրական հետաքրքրությունների ու վաստակի մասին և որպես այդպիսին հիշատակում միայն «զՏետրակ իմն՝ յորջորջեալն յորդորակը»: Իրականացնելու համար իր գրասեռ եղբոր պայծառ ծրագրումները, Եղիազարը հաղորդում է ընթերցողին, որ ինքը ևս, հետևելով իր «լուսահոգի եղբոր» բաղձանքին, եվրոպական ազգերի «ճոխ» ու «պանծալի» գրականությունից «փոյթ ընդ փոյթ» որոնում է այնպիսի երկեր, որոնք «ի լոյս ածել յօգուտ և ի զբոսանս ազգին Արամազնէից»¹²: Սակայն այս դեպքում էլ Վոլտերի կամ նրա որևէ երկի մասին ոչ մի խոսք, ոչ մի ակնարկ:

Եղիազարի մահվանից (1787 թ.) հետո Շ. Շահամիրյանը ինքն էր զբաղվում տպարանի գործերով (մահանում է 1797-ին): Հայտնի է, որ Շ. Շահամիրյանը շատ է սիրել իր ավագ որդուն՝ Հակոբին, մեծ հույսեր կապել նրա գրասիրության և հրատարակչական գործիմացության հետ: Իր միջոցներով հիմնադրած տպարանը կոչել է նրա անունով, իր աշխատասիրությունների ճակատին որպես հեղինակ նշել է նրա անունը, իր պատվերով 1775-ին Վենետիկում տպագրված շքեղ «Հայաստանի աշխարհացույցը» նվիրել նրա թարմ

12 «Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց», Մադրաս, 1775, էջ 3:»

հիշատակին¹³ և այլն: Եթե այս և նման տվյալներին ավելացնենք նաև այն իրողությունը, որ հետագայում, Սիմեոն Երևանցուն հաջորդած Ղուկաս Կարենցի կաթողիկոսը բարյացակամորեն էլ տրամադրված Շահամիրյանների նկատմամբ, ապա մնում է զարմանալ, թե ինչու հրատարակելու համար ելրուպական գրական շուկաներում դիրք որոնող Շահամիրյանները չեն օգտվել առիթից՝ իրենց հաբաղատի ձեռքով հայացված ողբերգությունը հրատարակելու համար: Պարզ է, որ այն չի եղել:

Իսկ եթե, այնուամենայնիվ, եղել է, բայց մինչև 1812-ը չի հրապարակվել, ապա մնում է Հակոբ Նաղարի Շամիրյանին մեղադրել ուրիշի, թեկուղև իր արուեստագիթ թարգմանությունը ապօրինի կերպով յուրացնելու և հրատարակելու մեջ: Սակայն այդ ևս անհնար էր, քանի որ 1812-ին ապրում և գործում էին Շահամիրյանների հետնորդներից շատ շատերը, որոնց ներկայությամբ Հակոբ Նաղարի Շամիրյանը հազիվ թե իրեն թույլ տար նման հանդգնություն: Զէ՞ որ Շ. Շահամիրյանի և նրա որդու՝ Հակոբի սլաշժառ հիշատակը երկար ժամանակ սրբությամբ պահպանվել է Շահամիրյանների տոհմական միջավայրում:

Այդ մասին է խոսում նաև հետևյալ փաստարկը. «Կեսարի մահը» հայախոս ողբերգության սուաջին և երկրորդ գործողությունների վերջում (էջ 13. 57) ղեկավարված է տարբեր իրերից կազմված միևնույն դարդանկարը՝ մկրատ, ասեղ, կարերը բացելու պարագաներ, նժար, մեծ ու փոքր կշռաքարեր և մի թանաքաման՝ մեջը փետրագրիչ: Առաջին հայացքից տարօրինակ թվացող այս դարդապատկերը, սակայն, անցյալում եղել է Շահամիրյանների հիմնադրած տպարանի խորհրդանիշը, զրոշմը, իսկ ոմանց կարծիքով՝ նաև «տոհմանշանը»: Եվ իսկապես, այն առկա է Շահամիրյանների՝ 1770-ական թթ. հրատարակած գրքերի ղղալի մասի տիտղոսաթերթերին, ներսի էջերում կամ վերջում¹⁴: Բանասերները պարզել են, որ այդ զրոշմը խորհրդանշել է Շահամիրյանների դերձակությամբ կամ գղակակարությամբ, ապա նաև սեղանավորությամբ և վաճառականությամբ ղբաղվելու իրողությունը¹⁵, իսկ թանաքամանն ու գրիչը, հավանաբար, եղել են նրանց լուսավորական, գրական-հրատարակչական գործունեության նշանակը:

Մինչև այժմ բանասիրության մեջ տիրում էր այն կարծիքը, թե Շահամիրյանների 1772-ին հիմնադրած տպարանը շուրջ մեկ տասնամյակ գործելուց հետո՝ 1783-ից «ընդմիշտ դադարում է», «բոլորովին անհետանում»: Ժամանակակիցները, սակայն, վկայում են, որ որդու՝ Նդիաղարի մահվանից հետո էլ 1789 թ. ծերունազարդ Շահամիրյանը «շարունակում է գործել ի տպարանում Մադրաս»¹⁶: 1812-ին՝ «Կեսարի մահը» ողբերգության մեջ Շահամիրյանների զրոշմի կրկին երևալը վկայում է, որ այդ տպարանը, որոշ դարձերով, գոյատևել է նաև հետագայում և XIX դարի սկզբին Հակոբ և Հովսեփ Նաչար Շահամիրյանների ջանքերով վերակառուցվել է, հագեցվել նույն

13 Թ ա դ. Ա վ դ ա լ Ր Ե գ յ ա ն, Հայ աղատագրական շարժման երկու հոսանք XVIII դարի վերջում, «Նորք», գիրք Ա, Երևան, 1922, էջ 162:

14 Տե՛ս «Գիրք անուանեալ որոգայթ փառաց», «Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց», «Պատմութիւն վարուցն և գործոց Նաղր Շահ թագաւորին պարսից» և այլն:

15 Տե՛ս Ս. Ն Ր Ի Յ յ ա ն, Հակոբ Շահամիրյանցի մատենագրական գործունեությունը Հնդկաստանում, «Փորձ», Թիֆլիս, 1881, № 2, էջ 11:

16 Նույն տեղում, էջ 24:

տառատեսակներով և շարունակել է դործել Շահամիրյանների տպարանի ավանդական դրոշմանշանի տակ: Սա ևս յուրովի հարգանքի տուրք էր, որ Շահամիրյանի ժառանգները մատուցում էին իրենց հանգուցյալ տոհմակիցների հիշատակին:

Բանասիրության մեջ, իրոք, եղել են ծայրահեղ կարծիքներ, որ Շ. Շահամիրյանի ժառանգները «փչացած, անբարոյական մարդկանցից էին»¹⁷, որ նրա մահվանից հետո նրա ողջ ժառանգությունը վատնեցին, և որ Շահամիրյանի վերջին շառավիղը անցյալ դարի վերջերին ընկել էր ծայրահեղ թշվառության մեջ և ապաստան գտել անկեղանոցներից մեկում¹⁸: Կարծում ենք, որ այս խիստ բնութագրումները չեն վերաբերում ո՛չ Հակոբ և Հովսեփ Նազարի Շահամիրյաններին, որոնց գրական-հրատարակչական վաստակին են վերաբերում Վոլտերի «Կեսարի մահը» ողբերգությունից բացի նաև Ֆլորիանի «Նումա Պոմպիլիոս» պատմա-հայրենասիրական հերոսական պոեմը և «ուրիշ գրքեր», ինչպես վկայում է բանասեր Ա. Երեմյանը¹⁹, ո՛չ էլ նրանց հորը՝ Նազար Հակոբջան Շամրյանին, որը, ինչպես կտեսնենք ստորև, XIX դարի սկզբի մադրասահայ հասարակական-քաղաքական կյանքի նշանավոր դեմքերից էր:

Շ. Շահամիրյանը դուստրերից բացի ուներ աբու զավակներ՝ Հակոբը, Եղիազարը, Հովհաննեսը, որ մահացել է 1834-ին: 1786-ին Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը, Շ. Շահամիրյանին հղած նամակներից մեկում «բազում սիրով» ողջունում և օրհնում է նրա «հարազատ զավակացն»՝ «աղա Յովհաննիսին և աղա Եղիազարին, նաև դեռաբուսիկ թոռին քոյ աղա Նազարին»²⁰: Որ Նազար Հակոբջանը Շ. Շահամիրյանի ավագ որդու՝ Հակոբի որդին էր²¹, այդ պարզ երևում է նաև այն իրողությունից, որ Շ. Շահամիրյանի մահվանից հետո որդին՝ Հովհաննեսը և թոռը՝ Նազար Հակոբջան (կամ Հակոբ—Կ. Ճ.) Շահամիրյանը, իբրև օրինական ժառանգներ, կազմել են իրավական փաստաթղթերի մի ցուցակ, որտեղ հիշատակված էին վրաց Հերակլ II թագավորի տրդի Գյորպիի՝ Շ. Շահամիրյանին, իսկ սրա մահվանից հետո՝ նրա ժառանգներին տված հրովարտականն ու իրավագրերը՝ «Լոռի զավառը նրանց իբրև սեփականություն նվիրելու և Շահամիրյանին ազնվականի (թավադի) կոչում տալու մասին»: «Ինձ թվում է,— գրում է բանասեր Ս. Վ. Տեր-Ավետիսյանը,— որ վերոհիշյալ դոկումենտները Շահամիրյանի մահվանից հետո նրա ժառանգները—որդին Հովհաննեսը և նրա թոռը Նազար Հակոբի Շահամիրյանները ներկայացրել են Թբիլիսիի ռուսական դատարանին Լոռու վրա ունեցած իրենց ժառանգական իրավունքը հաստատելու համար»²²:

17 Լեո, Հայկական տպագրություն, հատ. Բ, Թիֆլիս, 1902, էջ 545:

18 Ս. Երիցյան, Հակոբ Շահամիրյանի մատենագրական գործունեությունը և նդկաստանում, «Փորձ», Թիֆլիս, 1881, № 2, էջ 18:

19 Ա. Երեմյան, Զուղահայ-հնդկահայ մշակույթը և ժողովրդական բանահյուսությունը (XVII—XIX դար), «Նոր Ազգարար», Կալկաթա, 1952, № 6—8, էջ 13:

20 Տե՛ս Ս. Վ. Տեր-Ավետիսյան, Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության համար, «Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», հատ. 13, 1946, էջ 53:

21 Այդ մասին տե՛ս նաև Գյուլտ ք. Աղանյանի վկայությունը. «Դիւան հայոց պատմութեան», Գիրք է, Թիֆլիս, 1909, էջ 534:

22 Տե՛ս Ս. Վ. Տեր-Ավետիսյան, Նշվ. աշխ., էջ 10:

Նազար Հսկոբ Շահամիրյանի անվանը հանդիսում ենք 1796 թ. պատե-
րազմական դեպքերի հետևանքով Զուղայի վանքը բարձիթողի արած և Հընդ-
կաստան ձողոպրած Հսկոբ առաջնորդի գործի կապակցությամբ Մադրասում
կայացած «ազգային ժողովի» նիստի արձանագրության մեջ: Այս փաստա-
թուղթը ստորագրած մադրասցի հայրենասիրների ու հասարակական գործիչ-
ների շարքը գլխավորում է ծերունազուգ Շահամիր Սուլթանում Շահամիր-
յանը, իսկ տասներկուերորդը նրա թոռն է՝ Նազար Հակոբջան Շահամիր-
յանը²³:

«Ազգարարի» երբեմնի խմբագիր Հ. Շմավոնյանը 1806 թ.՝ Մադրասի իր
տպարանում հրատարակում է «Անցք կամ գործք քառասուն երեք, և քառա-
սուն և չորս երորդ ժողովոց Մադրասիս Հայոց» ուշագրավ գրքույկը: Բանասեր
Ա. Երեմյանը հրապարակել է այդ գրքույկի հանգամանալի նկարագրու-
թյունը²⁴:

Ինչպես երևում է արձանագրություններից, այդ նիստերի նախագահը և
հիմնական ատենախոսներից մեկը եղել է նույն Նազար Հակոբջան Շահա-
միրյանը: Իր այդ «նշանակալից» ճառում, ինչպես այն գնահատում է ակադե-
միկոս Ա. Կարինյանը, Նազար Հակոբջան Շահամիրյանը ժողովականներին
կոչ է արել օտարի աղետալի լուծը թոթափելու համար դիմել «մեծամեծ կայ-
սերութեան օրհնեալ Ռուսաստանու» օգնությանը և առաջարկել է հնդկահա-
յերի անունից երախտագիտության թուղթ հղել ռուսաց կայսր Ալեքսանդր I-ին:
Նազար Շահամիրյանի ելույթին ձայնակցում են Հ. Շմավոնյանը և ժողովի
մյուս մասնակիցները: Ինչպես նկատելի է, Նազար Հսկոբի Շահամիրյանը
հնդկահայ իրականության մեջ հեղինակություն վայելող մարդկանցից էր և
ավանդաբար շարունակում էր Շահամիրյանների և ազգային-ազատագրական
շարժման հնդկահայ գործիչների՝ հայրենիքի փրկության ոուսական կողմնո-
րոշման քաղաքականությունը:

Շ. Շահամիրյանի փոքր որդի Հովհաննեսի և սրա եղբորորդի Նազարի
անունները կողք-կողքի հանդես են գալիս նաև մեկ այլ առիթով: Սփրեմ
արքեպիսկոպոսի՝ Հ. Շմավոնյանին հղած 25 մարտի, 1807 թվակիր նամա-
կում ռուսահայերի հոգևոր առաջնորդը անվանական օրհնանքի իրոսքեր է
հղում մադրասահայ «պատվելի պարոնանց»՝ «առ իւրաքանչիւրսն ըստ պա-
տուելութեանցն»: Չորս տասնյակ երեւելի մարդկանց անուններից բաղկացած
ողջույնի այդ ուղերձում, ըստ պատշաճի, առաջին երեք տեղերը հատկացված
են Մադրասի հայ հոգևորականներին, իսկ նրանց հաջորդող աշխարհական
գործիչների շարքը գլխավորում են «Յոնաննէս Շամիրեանը» և «Նազար
Յակոբջան Շամիրեանը»²⁵: Ի՞նչ հաշվի առնենք նաև Շահամիրյանների տոհ-
մում անուն ալգանվան հետ հաճախ հայրանունը ևս հիշատակելու ավանդա-
կան սովորությունը, ինչպես՝ «Շամիր Սուլթանում Շահամիրեանց», «Յակոբ՝
որդին Շահամիրի Շահամիրեանց», «Նազար Յակոբջան Շամիրեան» և այլն,

23 Հ. Թ. Տ ե ր - Հ ո վ հ ա ն Ե ա ն ց, Պատմութիւն Նոր Զուղայու որ յԱսպահան, հատ. Ա,
Նոր Զուղա, 1880, էջ 394:

24 Տե՛ս Ա. Ե ր Ե մ յ ա ն, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի Մադրասի ներկա-
յացուցիչները, «Էջմիածին», 1948, № 10—12, էջ 38—45:

25 Տե՛ս Մ. Մ խ ի թ ա ր յ ա ն, Նյութեր Հարություն Շմավոնյանի գործունեության մա-
սին, էջ 94:

կասկած չի մնա, որ «Յակոբ և Յովսեփ Նազար Շամրեան» ևղբայրներն էլ վերոհիշյալ Նազար Հակոբջան Շամրյանի որդիներն են, մանավանդ, որ նրանց գրական-հրատարակչական գործունեության ժամանակահատվածը՝ 1810-ական թթ., համընկնում է իրենց հոր, արդեն իսկ որպես հեղինակավոր վաճառականի և ձեռնհաս գործչի հասուն շրջանի հետ:

Կարելի է շարունակել այս և նման վկայակոչումները, սակայն այսքանն էլ բավական է հավաստելու, որ Հակոբ Շահամիրի Շահամիրյանը և Հակոբ Նազարի Շամրյանը նույն տոհմի տարբեր շառավիղներն են, որ Վոլտերի «Կեսարի մահը» ողբերգության առաջին թարգմանիչը ոչ թե Շ. Շահամիրյանի որդին է՝ Հակոբ Շահամիրյանը, այլ ծոռը՝ շուրջ շորս տասնամյակ հետո հանդես եկող Հակոբ Նազարի Շամրյանը:

Շփոթել այս երկու անվանակից շառավիղներին և մեկի վաստակը վերագրել մյուսին նշանակում է XIX դարի սկզբի հնդկահայ գրական-մշակութային կյանքի ասպարեզից ակամա դուրս մղել մի շնորհալի թարգմանչի ու հրատարակչի անունը, ժխտել նրա ավանդը նշված ժամանակաշրջանի հայ գեղարվեստական մտքի պատմության մեջ:

Այս աշտումն ինքնին անհրաժեշտ էր ոչ միայն Վոլտերի առաջին հայ թարգմանչի ինքնուրույնը պարզելու տեսակետից, այլև այն առումով, որ Շ. Շահամիրյանի մահվանից հետո, նրա ժառանգներից շատերը դեռ երկար ժամանակ շարունակում էին կենսունակ պահել իրենց անվանի տոհմի լուսավորական, ազատամտական ավանդները, և իրենց հասարակական-քաղաքական ու գրական-հրատարակչական գործունեությամբ սատարել հնդկահայ գաղթօջախի ազգային-մշակութային կյանքի առաջընթացին:

* * *

Հակոբ Նազար Շահամիրյանի կյանքի ու գրական գործունեության մասին մեր տեղեկություններն առայժմ սուղ են: Նրա գրական-գեղագիտական և քաղաքական համոզմունքների մասին Վոլտերի «Կեսարի մահը» ողբերգության խաղաղությանը բացի որոշ պատկերացում կարելի է կազմել նաև այն առաջաբանից, որ դետեղված է այդ երկի թարգմանության սկզբում (էջ Ա—Ժ): Այն կրում է «Թուղթ ՚ի պարոն Ալգարոտտեայ առ Ամիրա Ֆրանքինի դեսպանն որ ՚ի Ֆլորենտիայ: ՚ի վերայ ողբերգութեանն Յուլիոսի Կեսարոսի, ՚ի պարոն Վոլտերայ յօրինեալ» վերնագիրը: «Թղթի» առաջին իսկ տողերից պարզվում է, որ Ալգարոտտին Ֆլորենցիայի դեսպան Ֆրանկինիի խնդրանքով Փարիզում ձեռք է բերել Վոլտերի «Կեսարի մահը» ողբերգության մի «պատկանաւոր ձեռագիր» և այդ երկի վերաբերյալ իր «նկատումների» հետ ուղարկել դեսպանին:

Մեր կարծիքով այդ ուշագրավ «Թուղթը» պատկանում է XVIII դարի իտալական լուսավորական շարժման աչքի բնկնող ներկայացուցիչ Ֆրանչեսկո Ալգարոտտի (1712—1764) գրչին: Ծնվելով վենետիկում, Ալգարոտտին երկար տարիներ ապրել ու ստեղծագործել է Փարիզում, ծանոթ է եղել Վոլտերին, իսկ վերջինս դեռ ձեռագիր վիճակում կարդացել և բարձր է գնահատել նրա «Նյութոնիով կանանց համար, կամ Երկնոսություններ լույսի և գույների մասին» գիտահայրամատչելի երկը: Գիտության, գրականության և արվեստի տարբեր բնագավառներին նվիրված իր ակնարկներում ու էսսեներում ընթեր-

ցող լայն շրջանների համար միանգամայն դյուրամբռնելի ոճով քննարկել է նաև գրական-գեղագիտական խնդիրները:

Ալգարոտտին եղել է ազգային լեզվի ու մշակույթի կրքոտ ուղաշտպան: Համոզված լինելով, որ մասնատված ու ստրկացված հայրենիքում ազատ ու ծաղկուն գրականության մասին խոսք անգամ լինել չի կարող, Ալգարոտտին իր երկերում, և հատկապես «Թուղթ առ Վոլտեր» գրական ակնարկում, արժարժեք է հտալիայի և իտալացիների ազգային միասնության և քաղաքական ազատության գաղափարը:

Վոլտերի «Կեսարի մահը» ողբերգության մասին գրած իր վերոհիշյալ «Թղթում» Ալգարոտտին հիացմունքով է խոսում ֆրանսիական դասական ուղբերգության խոշորագույն ներկայացուցիչներ Կորնելի և Ռասինի մասին: Վերջիններս, գրում է իտալացի արվեստաբանը, թատերական արվեստը հասցրեցին բարձր կատարելության:

Ալգարոտտին կողմնակից է այն «ինքնակամության», որ Վոլտերը ներբերեց ֆրանսիական կլասիցիստական թատրոնի քարացած սկզբունքների մեջ: Հավանաբար ինքր առաջիններից էր, որ կռահել է, թե «Կեսարի մահը» ողբերգության մեջ «ի տեղիս ինչ պարոն Վոլգերն զհետ զնաց Շեքսպերայ ուրումն անգլիացի բանաստեղծին, որ սպրդեցուց ի նոյն գործն զտղայական զանապատշաճութիւնս՝ միանգամայն և զվալլակսն նիւթս գերակայ հանձարոյ»: Վոլտերը մասամբ շեղվել է կլասիցիստական դրամայի ավանդական կանոններից, հանդիսականների «հարմարութեան» համար կրճատել գործողությունները, հինգի փոխարեն կիրառել երեքը, և տաղտկալի, «որոտաբան» լառերի փոխարեն գործողությունը հարստացրել է դրամատիզմով լի դեպքերով ու տեսարաններով:

Ալգարոտտին չի կարող «պարսավադրել» Վոլտերին այն բանի համար, որ սա իր ողբերգության մեջ սեր կամ կանայք չի ներբերել: Ինքը ես գերադասում է հայրենասիրական, ազատասիրական գաղափարներով ներթափանցված դրաման, անձնականը բնորոշականին զոհաբերելու, ժողովրդի ու հայրենիքի հանդեպ քաղաքացիական պարտքի գիտակցությամբ տոգորված արիասիրտ, «սխրալի» հերոսներին: Կանայք իրենց «գիրդ ու խանդաղատալի» զգացմունքներով կարող են նսեմացնել, «ծիծաղելի» դարձնել Բրուտոսի և Կասսիոսի նման «խստագոյն հոգիներին»: Ալգարոտտին իրավացիորեն նկատում է, որ Վոլտերը չի խուսափում հոգեբանական բարդ իրավիճակներ ստեղծելու զժվարությունից, ինչպես, օրինակ, Բրուտոսի՝ Կեսարի ապօրինի բրդին լինելու հանգամանքը, իրադրություն, որ առավել ազդու է դարձնում գործող անձանց հերոսական արարքը: Մի կողմից, գրում է Ալգարոտտին, ցույց է տրվում «վայրենարար», «հոխորտացող» Բրուտոսը, որը, սակայն, տևր է կանգնում մի դատի, որն ըստ ամենայնի «արդար» է, մյուս կողմից Կեսարը՝ լի գթությամբ և առաքինությամբ, բայց իր ժողովրդի ու աշխարհի ազատության վրա բռնացող:

Ինչ խոսք, որ ֆրանսիացի ողբերգականների և մասնավորապես Վոլտերի «Կեսարի մահը» ողբերգության առնչությամբ Ալգարոտտի արտահայտած այս և նման առաջավոր մտքերն ու դատողությունները դուրս չեն գալիս իր ժամանակի արվեստի ու գրականության կլասիցիստական ըմբռնումների շրջանակներից: Իայց դա լուսավորական դարաշրջանի այն մարտնչող կլասիցիզմն է, որը տոգորված է հակաֆեոդալական, հակաբոնապարտական պա-

թոսով և որը, ինչպես իրավացիորեն նկատել է Վ. Թերդիբաշյանը, «ավելի՛ ջայտուն էր դառնում ճնշված ազգերի մոտ, ինչպես, օրինակ, Իտալիայում. ուր ազգային ազատագրության և հայրենասիրական գաղափարները դրամատուրգիայի մեջ շեշտված կերպով արտահայտվում էին բռնակալների դեմ պայքար մղելու կոչերով»²⁶։ Եվ Ալգարոտտին ավելի վաղ, քան իտալական հեղափոխության կլասիցիզմի ներկայացուցիչները (Ալֆիերի, Մոնտի և այլն), Վոլտերի դրամաները արժեքավորում էր առավելապես ազգային ազատագրության տեսակետից, սրն իր սուր ծայրով ուղղված էր ավստրիական բռնատիրության դեմ։

Այս իսկ առումով XVIII դարի վերջի և նոր դարասկզբի հայկական լուսավորական շարժումն իր գրական-գեղարվեստական ու գաղափարական արտահայտություններով համահնչուն էր իտալական ազգային վերածնության մտավոր շարժման հետ։ Ուստի զարմանալի չէ, որ Ֆրանսիացի մեծ գրողի ազատախոհ երկն ու նրան ուղեկցող «Թուղթը» հայ իրականության մեջ երեւան եկան հենց այն միջավայրում, որը մինչ այդ էլ ներարկված էր ազգային միասնության և պետական անկախության գաղափարներով։

Գրական պատմագրության մեջ Վոլտերի հռոմեական թեմաներով հորինված ողբերգությունները, այդ թվում նաև «Կեսարի մահը», առհասարակ կոչվել են «ռեսուրբլիկական դրամաներ»։ Հայտնի է, որ ազգային-ազատագրական շարժման հնդկահայ գործիչները ևս ապրել ու գործել են ապագա ազատագրված Հայաստանում ժողովրդապետական կարգեր ստեղծելու ուսույթական երազանքներով։ Նրանք հիացմունքով են արտահայտվել Հռոմի պատմության հանրապետական շրջանի մասին և իրենց երկերում կոչ արել հայրենիքում նոր հասարակարգ հիմնելիս հետևել Հռոմի հասարակապետական կարգերի օրինակին։ «Որոգայթ փառացում», օրինակ, փափագ էր հայտնվում Հռոմի պատմությունը թարգմանել հայերեն, քանի որ այն կարող էր օրինակ ծառայել հայերի համար²⁷։

Իմ ահա Շահամիրյանների շառավիղներից Հակոբ Նազար Շահամիրյանը, հավատարիմ մնալով իր նախորդների հայրենասիրական պատգամներին, Ֆրանսիացի մեծ լուսավորչի նշանավոր երկի թարգմանությամբ գեղարվեստական մարմնավորում էր տալիս տասնամյակներ առաջ նրանց դաշնամբ գաղափարական ծրագրումներին։

Ինչ վերաբերում է Ալգարոտտի «Թղթին», ապա այն ևս լուսավորական դարաշրջանի էվրոպական առաջավոր մտայնության գրական անդրադարձումն էր։ Թարգմանելով «Թուղթը», Հակոբ Նազար Շահամիրյանը, բնական է, առաջնորդվել է ազգային կյանքի ու մշակույթի ուրույն շահագրգռություններով, յուրովի արձագանքել հայ նոր գրականության և թատրոնի գաղափարական ու գեղարվեստական որոնումներին։

Ալգարոտտի «Թղթի» գրական-պատմական նշանակությունը արժեքավորելիս պիտի նշել նաև, որ այն, դասական ողբերգության պոետիկայի վերաբերյալ իր հետաքրքիր հարցադրումներով ու «նկատումներով», որոշ իմաս-

26 Վ. Թերդիբաշյան, Հայկական կլասիցիզմ, «Հայ նոր գրականության պատմություն», հատ. II, էջ 101։

27 Տե՛ս Գ. Հ. Գրիգորյան, Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից, Երևան, 1957, էջ 90—91։

տո՞վ կանխեց XIX դարի հայ կլասիցիստ տեսաբանների նման բնույթի աշխատությունները և նպաստեց հայ իրականության մեջ լուսավորական կլասիցիզմի գեղագիտական ըմբռնումների կայունացմանը:

Վոլտերի «Կեսարի մահը» ողբերգության և նրա արժանավոր մեկնաբան Ֆրանչեսկո Ալգարոտտիի «Թղթի» առաջին հայ թարգմանիչն ու հրատարակիչը, իր գրական-հրատարակչական համեստ վաստակով իսկ, պետք է իր արժանի տեղն ունենա XIX դարի սկզբի հայ գրական-թատերական մտքի պատմության մեջ:

ПЕРВЫЙ АРМЯНСКИЙ ПЕРЕВОДЧИК ТРАГЕДИИ ВОЛЬТЕРА «СМЕРТЬ ЦЕЗАРЯ»

К. А. ДЖИНГОЗЯН

(Резюме)

После уточнения года издания первого армянского перевода трагедии Вольтера «Смерть Цезаря» (1812, Мадрас) оставалась невыясненной личность ее переводчика Акопа Назара Шаамиряна. В последние годы было высказано мнение, что им был сын известного деятеля национально-освободительного движения индийских армян в XVIII в. Шаамира Шаамиряна—Акоп Шаамирян (1745—1774). Однако наши поиски в этом направлении привели к иному выводу. В статье показывается, что первым персводчиком трагедии «вольнодумца» и «безбожника» Вольтера был не сын Ш. Шаамиряна, а его правнук, появившийся на литературной арене в 1810 годах. Таким образом, после смерти Ш. Шаамиряна и его сыновей потомки их продолжали просветительские и свободолюбивые традиции рода Шаамирянов.

Что же касается предисловия, предпосланного первому армянскому изданию трагедии, где охарактеризованы ее идейно-эстетические особенности, то, как мы считаем, оно принадлежит выдающемуся представителю итальянского просветительного движения—энциклопедисту, литературоведу и искусствоведу Франческо Альгаротти (1712—1764).